

տարագուած, նոր այդ վարդապետութիւնը, Մաթիկի մտքին մէջ հեռու էր կրկնութիւնը ըլլալէ ուրիշի մը, որ փորձուած էր մեր թուականութեան սկսման կէսերուն, երբ անջրդի, մռայլ, բայց հոգեպէս հզօր թելադրանքով հողերու վրայ, մարդիկ, բոպիկ ու պարզ ձկնորսներու խօսքերուն հմայքին տակ, կը ձգէին իրենց աշխարհիկ հեշտութիւնները ու կը տարուէին, իրարու միացնելու իրենց պզտիկ ցաւերուն բռնութիւնը, որպէսզի սա անցաւոր կեանքին անցնէին անձկութիւնները ու շահէին անանցին անճառելի կայսրութիւնը...: Կ'արժէր լսել Մաթիկին բերանէն նոր կրօնքին հսկայ գինովութիւնը: Միալ՝ անոր առաքեալները բաղդատել բոլոր հրեաներուն, - բոլորն ալ կատաղի տեսաբաններ աւելի քան կատաղի ուխտաւորներ վայելիքն, որոնք այդ վայելքը, սա աշխարհին մէջ նուաճելէ յուսահատ, կերպը գտնել կարծեցին յաջողութեան, զայն, միշտ այդ վայելքը փոխադրելով... երկինքներուն խորը: Մաթիկ երկինքին արքայութեան նուիրագործուած տարագր չհեզնեց, բայց անոր ծիր ու գօտի (zone) յայտարարեց Մոսկուան: Լսած էի սուրբ այդ Քաղաքէն, բոլոր սրբավայրերուն հմայքովը լուսապսակ: Կարդացած էի իր մեծ ողբերգութիւնը, 1812ին ու նորանորոգ ամբարձումը մոխիրներէն: Բայց իմ ընթերցումները նոր անոր փողոցներուն մէջ կը խօսէին բորբոսէն, որ միտքին ժանգն էր մեր յօրինումներուն վրայ, արտակարգ շուայտութենէն, որ կայսրութեանց ամէնէն նուրբ հոսումներուն, ծծումներուն կերպարանքը կ'առնէ՝ կիներու հեշտանքներուն վերլուծումը կանխելով, զանոնք, այդ կիները վերածելով անտարագելի առարկաներու: Կար տակաւին վոտքան, որ 1850ի ռուս վէպին մէջ տեսակ մը կախարդական էլեքսիւր, կ'ընէր անհուն Ռուսիոյ տառապանքը աւելի քան խեղճ ու մարդկային: Ուրի՞ չ: Անշո՛ւշտ: Բոլոր իմ գիրքերը, ռուս վէպին շուրջը կը պատմէին սլաւ գգայնութեան, իրենց երկրին պէս անտարագելի, բայց ահաւոր չափով մը իրաւ, որ